Վերապատուելի Տեառն Տեառն Հ. Մկրտիչ վրդ.ին
կարօտիւ սիրոյ ողջոյն

Շնորհօք սուրբ հոգւոյն և աղօթիւք արժանաւորաց՝ աւանիկ խաղաղութեամբ և միաբան ընտրութեամբ, յերեկոյի հինգշաբաթի յորում լուսանայր ուրբաթն, տարածեցաւ ընդ ամենայն քաղաքն թէ Միաբանեալ է մեծ մասն գարտինալաց առնել զպապն, ուստի և յառաւօտուն իսկ և իսկ, ի 20 մայիսի, ի հնգեւասան ժամու աւուրն, յորում ներկայ գտայ և ես, աւետիս ընկալաւ ամենայն ժողովուրդն Հռոմայեցւոց, թէ ունիմք մեք զսրբազան պապ, զգարտինալն կանկանէլլի, ի չորեքտասաներորդ կղէմէս Պապ. անդ էր ուրախութիւն տիեզերական, մանաւանդ առաջինն եղև որ ի պատուհանէն ծափ զծափի հարկանէր գարտինալ ռէծծոնիգօն զարմացմամբ ամենեցուն։ Ուրեմն յետ ճաշուն իսկոյն ի՛ջուցին աթոռով և Վիվայով ի սուրբն պետրոս, և արարին զմեծ հանդէս Երկրպագութեան Գարտինալաց. որում երիցս արարին ըստ կանոնաց զերկրպագութիւնն, ուստից նորա և ձեռաց նորա. և ապա գրկախառն համբոյր տալով։ Այսօր նա ինքն սկիզբն արար գրել թուղթս ձեռամբ իւրով ամենայն թագաւորաց Եւրոբիացւոց։...

Գրեցաւ ի Հռոմ 1769
ի մայիսի 21

Անարժան ծառայ
Հ. Գէորգ

ՄՋԸ.

Ս. Ղազար առաքուած Նարեկի օրինակի մը բաղդատական ուսումնասիրութեան մասին կը խօսուի նախ։

Երկրորդ մասով կը ստանանք շատ օգտակար և հետաքրքրական ծանօթութիւն մը «սրտի դգայի անկում» կոչուած հիւանդութեան մը և անոր ժողովրդական բժշկութեան մասին, որ ասկէ գրեթէ մէկուկէս դար առաջ ի գործ կը դրուի եղեր։ Տեղեկութիւն մը՝ որ յատկապէս պիտի շահագրգռէ ընդհանուր բժշկական գիտութիւնը։

Գերամեծար գերյարգելի Աբբայ հօր մերոյ և բարեւնապետի
տեառն տեառն Ստեփաննոս վարդապետի, ողջոյն

Թղթ. ՃԼԷ

... Առաքեցի զմի նարեկ ի վանս, զոր ես անտոն եղբայրս։ Եւ թէ վասն է՞ր, ծանիք, քանզի մուրադողլու Գասպար սառաֆն ասացեալ է անտոն եղբօրս, թէ ի սուրբն կարապետին վանքն կայ հնագոյն ձեռագիր նարեկ, զորմէ ասեն լինել ձեռագիրն նոյն սրբոյն։ Եւ ես առաքեցի անդր զմի նարեկ տպագրեալ, և զտարբերութիւնսն նշանեցին անդէն, և առաքեցին առ իս։ Կայ ևս նոյնպէս հնագոյն ձեռագիր մի յէջմիածին, որոյ և զտարբերութիւնսն տալոց եմ բերել։ Արդ՝ որպէս կարծեմ, կայ և ի վանքն աբբայ հօրն լաւ ձեռագիր նարեկ, և կայ իսկ. և խնդրեմ ի քէն զի և դու զտարբերութիւնսն նորա տացես բերել ինձ։ Իսկ անտոն եղբայրս՝ չկարելով բացասել այնպիսի երևելի առն յազգի մերում, խոստացեալ է կատարել զայն։ Վասն որոյ էառ զնարեկ մի անկազմ. և աղաչեաց զմեզ առաքել ի վանս, և բաղդատել ընդ ձեռագրին և զտարբերութիւնսն նշանել ի տպագրեալն. և ապա զնոյն տպագրեալ նարեկն, անդրէն առաքել յետս առ մեզ։ Եւ մեք զայն նարեկն առաքեցաք ի վանս, զի եթէ հնար է, կատարեսջիք զխնդիրսն նոցա։ Բայց յորժամ բաղդատեալ և կատարեալ զամենայն, և գեղեցիկ կազմեալ դնիցէք ի նաւն, փութով մեզ ծանուցէք, որպէս զի յառաջ քան զառլն մեր նոցա զնարեկն, պատճառ իւիք խնդրեալ ի նոցանէ, առցուք և մեք զօրինակն նարեկայ որ ի սուրբ կարապետին։...